թէ նրա ցանկութիւնը կրկատարուի, և նոյն օրը հրամայեց Բենէդոս աքսորել Դանիէլ պատրիարքին, իսկ Դաւիթ արքեպիսկոպոսին Լէմնոս, որովհետև նա ևս Ցովսէփի ընտրութեան հակառակ էր, մտադիր լինելով Դանիէլի մեկնելուց յետոյ նրան յաջորդել Կ. Պոլսում։

$^{16}/_{28}$ յունիսի 1800 ամի Թամարա դեսպանն ամենահպատակօրէն զեկուցանում էր, թէ «Ցովսէփ արքեպիսկոպոսն այս օրերս Էջմիածնի կաթողիկոս ընտրուեցաւ յընդհանուր գոհութիւն հայոց ազգի, որ իւր հակումը դէպի նա մի բազմաքանակ սոորագրութիւն կրող հանրագրով ցոյց տուաւ, որով ազգի ընտրութիւնը հաստատելու սովորական բերաթ են խնդրում Բ. Դռնից»։ Նորընտիր պատրիարքը Դաւթին յանձնեց բերաթն Էջմիածին տանելու պաշտօնը և այդպիսով ազատեց նրան մօտալուտ աքսորի վտանգից։ Բերաթի պատճէնը՝ չնորհակալութեան նամակներով և գործին վերաբերեալ միւս թղթերով՝ դեսպանն առաքեց վիցէ-կանցլէրին, ինչպէս որ տեսանելի է նրա զեկուցագրից յանուն թագաւորի ի $^{1}/_{13}$ յուլիսի 1800 ամի։

Երբ Ցովսէփի կաթուղիկոս ընտրուելը պաշտօնապէս յայտնի եղաւ, Պօղոս Ա. կայսրը «Նորին Կայսերական Մեծութեան Աւագ Տիտղոսը կրող» հրովարտակով ի 28 յուլիսի 1800 ամի հետևեալ խօսքերն ուղղեց Ցովսէփ հայրապետին և բովանդակ հայ ազգին.

«... Թէ ըստ օրինակի Մեր վերոյիշեալ նախնեաց և թէ մանաւանդ ի նշան Մեր յատուկ գոհունակութեան նրա (Ցովսէփ կաթողիկոսի) ջերմեռանդն գործերից, Մենք հաւաստելով հանդերձ, թէ միշտ Մեր Կայսերական գթութիւնն և բարեհաճութիւնը կընծայենք նոյն Ցովսէփ կաթողիկոսին և հայոց հայրապետական աթոռի բոլոր յաջորդներին, եւս և մելիքներին, իւզբաշներին և կառավարիչներին և համայն պատուելի հայոց ազգին,—թոյլ ենք տալիս նրան, Ցովսէփ կաթողիկոսին և նրա հայրապետական աթոռի յաջորդներին՝ հոգևոր հանդամանքների և եկեղեցական ծէսերի վերաբերեալ գործերում առաջուայ պէս իւր իրաւասութեան ներքոյ պահել Մեր պետութեան մէջ բնակուող և Մեզ հպատակ հայազգի և հայաղանդ մարդկերանց։ Վստահ թող լինին նոյն ամենազնիւ Ցովսէփ կաթողիկոսը, արգոյ մելիքներն, իւզբաշներն ու կառավարիչներն և ամբողջ յարգելի հայոց ազգը եւ մանաւանդ Մեր պետութեան

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան